117

...րոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Արհմիությունների Խորհրդի № 14.

ՅԵՐԵՎԱՆ
1925

## Հ. Ա. Մ. Խ.-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. ԼՈԶՈՎՍԿԻ «Հոսանքների պայքարը համաշխարհային արհշարժման մեջ» (սպառված է) . . . . . . գինը 15 կ.
2. ԼՈԶՈՎՍԿԻ «Արհմիությունների խընդիրները և գործելակերպը» (սպառված) » 40 կ.
3. ԵՅԴՈՒՍ «Ակնարկներ Անգլիայի բանվորական շարժման մասին» (սպառված) » 50 կ.
4. ԱՐԿ-ԱՆ «Բանվորական շարժման պատմությունը Անգլ., Ֆրանս., Գերմ.» . . » 75 կ.
5. ԱՐԿ-ԱՆ «Գործարկոմների և տեղկոմների ուղեցույց» . . . . 1 ռ. —
6. ԱՐԿ-ԱՆ «Աշխատանքի Օրենսգիրքը» . » 15 կ.
7. ԱՆՏՈՇԿԻՆ «Պրոֆեսիոնալ շարժումը Ռուսաստանում» . . . . . . » 60 կ.
8. ՍԵՆՅՈՒՇԿԻՆ «Գործարկոմների և տեղկոմների անելիքները» . . » 25 կ.
9. ԳՈՒՐԵՎԻՉ «Լենինը և արհեստակցական միությունները» . . . . » 50 կ.
10. ԲԻԽՈՎՍԿԻ «Բանվորների և ծառայողն. ապահով. հաշմ. դեպքում» . . . » 20 կ.
11. ՖԱԲՐԻԿԱՆՏ «Սոցիալական ապահովագրությունը» . . . . . . . » 20 կ.
12. ՏԵՏԵՐԻՆ «Ի՞նչ է արհմիության կանոնադրությունը» . . . . » 25 կ.
13. ՍՊԵՐԱՆՍԿԻ «Ի՞նչ պիտի իմանա ամեն մի մայր» . . . . . . » 20 կ.
14. — Կանոնադրություն բանվորական գրադարանի . . . . . . . » 15 կ.

02:331.85 2017գր

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք*

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ

Հ. Ա. Խ. ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Արհմիությունների Խորհրդի № 14.

ՅԵՐԵՎԱՆ
1925

1/3

ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ
1-2387գր

Գրատ. № 42 բ.    Տիրաժ 2000.    Պատ. № 3467.
Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Երևան։

Բանվորական մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման հետ աճում է նրանց մեջ նաև ձգտում դեպի գիտությունը—դեպի գիրքը։ Շնորհիվ այդ հանգամանքի բանվորական գրադարանները, իբրև բանվորական լայն մասսաներին ընդհանուր միությունական և ակումբային աշխատանքների մեջ քաշելու առավել իրական մեթոդներից մեկը, ավելի մեծ նշանակություն են ստանում։

Արհեստակցական միությունների VI համագումարը, հաշվի առնելով գրադարանների աճող նշանակությունը, անհրաժեշտ գտավ ուժեղացնել գրադարանային աշխատանքի միությունական ղեկավարությունը։ Այդ աշխատանքին հաջող ընթացք տալու համար Համագումարն առաջարկեց մի շարք միջոցներ, որ ընդհանուր գծերով այսպես կարելի յե ձևակերպել։ Գրադարանային աշխատանքն ընդունելով իբրեվ ակումբային աշխատանքի մի մասը, կապել վերջինիս աշխատանքի հետ· գրադարաններին մշտապես նոր գրականություն մատակարարելու համար պարբե-

բարար նախաձեռնչական կարգով ստեղծել ո-րոշ գումարներ. պլանաչափ լավ կազմակերպված ձևով գրականության մատակարարելու գործը կատարել կենտ. վարչությունների միջոցով՝ համաձայնեցնելով այն ՀԱՄԿԽ-ի հետ. զարգացնել բանվորներին գործնական գրադարանային աշխատանքների մեջ գրավելու աշխատանքը («Գրքի բարեկամների» խմբակների կազմակերպում). ուժեղացնել տեղերում կենտրոնի հրահանգչական աշխատանքը։

Գրադարանների աշխատանքի վիճակը դեռ ևս չի համապատասխանում այն պահանջներին, որ արվում են նրանց վերաբերմամբ։ Հիմնական պատճառներն են՝ պարզ որոշ կազմակերպչական ձևերի բացակայություն, անկարողություն գրադարանը կազմելու, լրացնելու, գրադարանային աշխատավորների համապատասխան պատրաստված կադրի բացակայություն։

Հաշվի առնելով համագումարի որոշումներն ու գրադարանների աշխատանքի թերությունները, ՀԱՄԽ-ը այս օրինակելի կանոնադրությամբ ընդունում է այն ձևերն ու ուղիները, որով ընթանալու յե միությունների գրադարանային աշխատանքը։

Այստեղ ցույց տված աշխատանքի ձևերը պարտավոր են։ Նրանք կարող են լրացվել կամ մասամբ փոփոխության յենթարկվել ըստ տեղական պայմանների և ընթացիկ պրակտիկայի, բայց առանց խախտելու այն հիմնական սկզբունքները, որ դրված են կանոնադրության հիմքում։

ՀԱՄԿԽ-ի Կուլտ-Բաժին

Հաստատված է իբրև օրինակելի։

ՀԱՄԽ-ի քարտուղար՝
Ա. ԴՈԴԱԴՈՎ

Կուլտ-Բաժնի Վարիչ՝
Ֆ. ՍԻՆՑՈՒՇԿԻՆ

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

## 1. Բանվորական գրադարանի խնդիրները

*ա) Բանվորական գրադարանը միութենական կուլտաշխատանքի մի մասն է կազմում։ Ուստի և նա իր խնդիրները չենթարկելու չէ այդ աշխատանքի ընդհանուր խնդիրներին, բանվորական լայն մասսաները համախմբելով միությունների շուրջը՝ իբրև կոմունիզմի դպրոցի։*

*բ) Բանվորական լայն մասսաներում գրադարանը զարթեցնելու չէ հետաքրքրություն և ուշադրություն դեպի գիրքը. նա ամեն կերպ նպաստելու չէ ոչ միայն քաղաքական, այլ և տեխնիկական անգրագիտության և կիսագրագիտության վերացմանը, ձգտելով գրքի միջոցով բարձրացնելու բանվորների ընդհանուր կուլտուրական մակարդակը և դասակարգային ինքնագիտակցությունը։*

*գ) Գրադարանի աշխատանքին պիտք է տալ կազմակերպչական հասարակական բնույթ և նրա*



*միջոցով մասսայիկ-բանվորին, բանվոր յերիտասարդությանը և կին աշխատավորուհուն անհրաժեշտ է քաշել ընդհանուր միութենական և ակումբային աշխատանքի մեջ։*

## 2. Կազմակերպչական ձևեր

*ա) Գրադարանը լինելով ակումբի մի մասը, իր աշխատանքը չենթարկում է ընդհանուր ակումբային խնդիրներին. նա աշխատում է ակումբի վարչության հաստատած ծրագրով և սպասարկում է* (обслуживает) *խմբակային և մասսայական ակումբային աշխատանքի բոլոր ձևերն ու տեսակները և առաջին հերթին՝ մասսայական լուսավորական աշխատանքը (դասախոսություններ, զեկուցումներ, խմբակներ, պատի լրագրեր, էքսկուրսյաներ, զանազան «անկյուններ» և այլն)։*

*բ) Գրադարանավարը հաշվետու չէ ակումբային վարչության առաջ (կամ վորտեղ ակումբ չկա՝ կուլտհանձնաժողովի առաջ) և չեթե վճռական ձայնի իրավունքով ընտրված չէ, ապա վարչության կազմի մեջ մտնում է, թեկուզ խորհրդակցական ձայնի իրավունքով։*

*գ) Այն ձեռնարկություններում, ուր ակումբներ չկան, գրադարանը մասամբ փոխարինելու չէ նրան, դառնալով քաղլուսաշխատանքի կենտրոն և իր աշխատանքները վերածելով «կարմիր անկյան»։*

դ) Մի ձեռնարկության բոլոր կուլտկրթական կազմակերպություններին գիրք մատակարարելու գործը կենտրոնացվում է մի գրադարանում: Միասնական գրադարանը, բացի անհատական ընթերցողներից, կոլեկտիվ աբոնեմենտի և շարժական գրադարանների միջոցով սպասարկում է բոլոր խմբակները, անգրագիտության վերացման դպրոցը, արտադրական բջիջները, «կարմիր անկյունները,» հանրակացարանները, զորանոցները, գործարանային դպրոցը, հասակավորների դպրոցները և այլն:

## 3. Գրադարանի միջոցները

Գրադարանն իր գոյությունը պահպանում է այն միջոցներով, վոր նրան նախահաշվային կարգով բաց են թողնում ակումբը կամ կուլտհանձնաժողովը: Գրադարանն այդ միջոցները ծախսում է այն կազմակերպության հաստատած նախահաշվով, վորի անմիջական իրավասության տակ է գտնվում գրադարանը:

**Ծանոթ.** — Գրադարանի գրքերի յեվ գույքի ունեցվածքային ինվենտարը լիովին գտնվում և համապատասխան միության տրամադրության տակ յեվ առանց վերջինիս թույլտվության վոչ մի ուրիշ կազմակերպության հանձնվել չի կարող:



## 4. Գրադարանի ամբողջացումը

(Комплектование)

ա) Բանվորական գրադարանները կազմելիս գլխավորապես հաշվի պիտի առնել մասսայական ընթերցողի պահանջները:

բ) Բանվորական լայն մասսաներին մատչելի լավ, գնայուն (ходкие) գրքերից գրադարանը ձեռք է բերում շատ օրինակներ:

գ) Գրադարանների կազմելն ու լրացնելը, ըստ հնարավորության, կատարվում է նահանգական բաժինների (կենտ. վարչությունների, գավառժանմունքների) միջոցով գրադարանագետի կազմած և արհեստակցական բարձր մարմինների կողմից հաստատված ցուցակներով:

դ) Գրքերի գնումը գրադարանը կատարում է ըստ Քաղլուսգլխվարի հրահանգների և ցուցակների, վորոնք համաձայնեցվում են ՀԱՄԽ-ի կուլտբաժնի հետ:

## 5. Աշխատանքի բովանդակությունն ու ձևերը

Բանվորական լայն մասսաներին գրքերի ընթերցանության քաշելու համար գրադարանը ակտիվ աշխատանք է տանում վոչ միայն գրադարանի մեջ, այլ և նրա պատերից դուրս, վորի համար.

ա) Շարժական գրադարանների, կոլեկտիվ աբոնեմենտների և գրատարների (книгонош) միջոցով կազմակերպում է գրքեր տալու կայաններ և սարքում է բարձրաձայն ընթերցա-

նություն ու զրույցներ գործարաններում, հանրակացարաններում, ճաշարաններում, «կարմիր անկյուններում»։

բ) Գրքերի ցուցահանդեսներ, հանձնարարելի գրացուցակների, կենդանի անոթացիայի (ծանոթացման) միջոցով պրոպագանդում է միութենական կյանքի բոլոր դեպքերը (համագումարները, կոնֆերենցիաները, հավաքական պայմանագրեր կնքելը և այլն) և ակումբային աշխատանքների բոլոր տեսակները (դասախոսությունները, հարց ու պատասխանի երեկոները, դեկուցումները, ներկայացումները)։

գ) Մասնակցում է պատի լրագրերի աշխատանքին, օգտագործելով այն հօգուտ գրքի և գրադարանի լայն պրոպագանդ մղելու համար։

դ) Պատասխանելով բանվորների առօրյա կյանքից ծագած հարցումներին, տանում է տեղեկատու (справочная) աշխատանք։

յե) Կազմակերպում է գրքերի երեկո։

զ) Բանվորների ընդհանուր ժողովներում հաշիվ է տալիս գրադարանի աշխատանքների մասին։

է) Գրավոր և բանավոր կերպով գրքեր հանձնարարելու միջոցով (պլակատների, գրքերի ցուցակի) գրադարանավարը ղեկավարում է իր ընթերցողների ընթերցանությունը, ինչպես նաև ղեկավարում է ընթերցողների խմբակների և «գրքի բարեկամների» խմբակի աշխատանքները,



նախապատրաստելով նրանցից գրքի կուլտուրական աշխատավորներ։

ը) Ընդգծելով լրագրերից հոդվածներ կտրելու միջոցով բյուլետեններ, ալբոմներ և տեղեկատուներ կազմելով, գրադարանը լայն կերպով ժողովրդականացնում է լրագրական հաղորդագրությունները. այս նպատակի համար առանձնապես օգտագործում է արհեստակցական մամուլը (արհեստակցական կյանքի դեպքերը) և կազմակերպում է լրագրերի բարձրաձայն ընթերցանություն։

### 6. «Գրքի բարեկամների» խմբակներ

Իր աշխատանքին օգնելու և կուլտ-կրթական ու արտադրական կազմակերպությունների և բանվորական լայն մասսաների հետ իր կապն ամրացնելու նպատակով գրադարանը կազմակերպում է ակտիվ «գրքի բարեկամների» խմբակի ձևով։

Խմբակի անդամ կարող է լինել ամեն մի ընթերցող, որ ցանկանում է ակտիվ մասնակցություն ունենալ նրա աշխատանքներում։

Ամբողջ խմբակի և նրա առանձին անդամների պարտականությունն է։

ա) Գրադարանի և գրքի օգտին պրոպագանդ մղել գրադարանից դուրս մնացած բանվորական մասսաների մեջ և հաշվի առնել ընթերցող մասսայի պահանջները։

բ) Գրադարանի համար գտնել նոր բաժանորդներ։

գ) Հետևել, որ ընթերցողները կատարեն գրադարանի կանոնները։

դ) Օգնել գրադարանապետին նրա աշխատանքի ընթացքում՝ գրքեր տալ, ընթերցարանում հերթապահություն կատարել, գրանցումներ անել գույքացուցակում, կազմել գրացուցակային քարտեր, պլակատներ, գրքերի ցուցահանդես, կազմակերպել գրքի յերեկոներ և այլն։

### 7. Մանուկների սպասարկում

Յեթե Լուսբաժինը առանձին մանկական գրադարան չունի և յեթե կան նյութական հնարավորություններ, գրադարանը առանձին աշխատանքներ է տանում մանուկների մեջ։ Այդ նպատակով գրքեր տալու համար նշանակվում են առանձին ժամեր և, յեթե հնարավոր է, առանձին աշխատակից։ Մանուկների մեջ առանձին աշխատանք տանելու համար գրադարանը պիոներական խմբակների և դպրոցների հետ աշխատում է կոնտակտ կերպով։

### 8. Գրադարանապետ

ա) Գրադարանապետը պետք է տեղյակ լինի քաղաքական և մանավանդ արհեստակցական ու արտադրական կյանքի դեպքերին, կազմակերպելով և ակտիվ կերպով մասնակցելով համապատասխան խմբակներում։

բ) Իր արտադրական վորակը բարձրացնելու համար գրադարանապետը մտնում է գրա-



դարանային միավորումների մեջ և հաճախում է քաղաքային և այլ գրադարաններին կից կազմակերպած պրակտիկումներին (գործնական դասընթացքներին)։

### 9. Աշխատանքը գյուղում

Գրադարանը օգնում է ձեռնարկությանը, յենթաշեֆ գյուղում նրա տարած աշխատանքի ընթացքում. օգնում է խրճիթ-ընթերցարանի կազմելուն, ըստ հնարավորության իր գրադարանից շարժական գրադարան տալով, հրահանգներ տալով գյուղական գրադարանապետին, կազմակերպելով գրքի յերեկոներ կամ օրեր և այլն։

### 10. Գրադարանի աշխատանքի հաշվետվությունը

ա) Համաձայն սրան կցված № 1 ձևի գրադարանն ամեն օր կատարում է վիճակագրություն աբոնեմենտի և ընթերցարանի հաճախման, ըստ բաժինների գրքերի ընթացքը, վարում է նաև գրադարանի աշխատանքի օրագիրը (տեղեկատու աշխատանքի, բարձրաձայն ընթերցանության, կազմակերպում ցուցահանդեսների և գրքի յերեկոների և այլն)։

բ) Հաշվետվության լրացրած բլանկը մեկ օրինակն ամեն ամիս, վոչ ուշ քան հաշվետու ամսին հաջորդող ամսվա 15-ը ուղարկվում է նահանգական բաժին (կենտ. վարչութ. գավբաժանմունք)։

## ԱՄԵՆՈՐՅԱ ԱՄՍԱ

Ակումբի կամ ձեռնարկության անունը, վորին

Բանվորների թիվը..................ծառայողների թիվը

կամ ձեռնար

1925 թ. ..........................................

| Թիվ | Բաժանորդներ | | | | | | | | | | Տրված է | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Նոր ընդունված են | Հեռացված են | Կան | | | | | | | | | | | |
| | | | Բանվ. | | Ծառ. | | Ըստ հասակի | | | | | | | |
| | | | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Մինչև 12 տ. տարեկան | 13—17 տարեկան | 18—25 տարեկան | 25 տ. վերև | ԸՆԴԱՄԵՆԸ | Բելլետրիստիկա | Թարգմանվածներ | Մանկական |
| 1 | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | | | |
| և այլն | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | |

Ամսվա վերջին կռվել են բաժանորդներ

Հաշվետու ամսվա ընթացքում ստացված է ...... գիրք

Ամ 1-ն հաշվետու ամսվա ըստ ինվենտարի կռվել է



## ԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ձև № 1.

Կից է գրադարանը..............................................

............................., վոր աշխատում են գրադարանի սպասարկության մեջ։

ամսվա։

| Գիրք ըստ բաժինների | | | | | | | | | | | | | Հաճախել են ընթերցար. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Գործնակ. գիտութ. | | | | | | | | |
| Ընդհ. բաժին | Փիլիսոփայութ. | Կրոն | Հասարակ. գիտ. | Աշխատ. և կոոպ. (արհմիութ.) | Լեզվաբանութ. | Մաթ. և բն. | Տեխնիկա | Գյուղատնտ. | Արվեստներ | Գրակ. կրիտ. | Պատմություն | Աշխարհագրութ. | Տղամարդ | Կին | Մանուկներ |
| 0 | 1 | 2 | 3 | 331 | 4 | 5 | 6 | | 7 | 8 | 9 | 91 | | | |
| | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | |

Բանվորական օրերի թիվը ամսվա մեջ

Գրադարանում........................ ընթերցարանում........................

..........................................գիրք։

(Տես մյուս յերեսը)

№ 1 ձևի հավելյալ յերեսը

| Համա-թիվ | Ինչ եր անցկացվում | Քանակը |
|---|---|---|
| | Գրքերի ցուցահանդես . . . . | |
| | Պլակատների ցուցահանդես . . | |
| | Բարձրաձայն ընթերցանություն | |
| | Գրքի յերեկո . . . . . . . . | |
| | Գրական դատեր . . . . . . . | |
| | Պատմություններ . . . . . . | |
| | Աշխատանք լրագրով . . . . . | |
| | «Գրադարանի բարեկամների» խմբակի ժողովներ . . . . . | |
| | Ընթերցողների ժողովներ . . . | |
| | Տրված ե տեղեկանքներ . . | |
| | Այլ . . . . . . . . . . . . | |

Գրադարանի վարիչի ստորագրությունը





15. ՉԵԿԻՆ-ՅԱՌՈՑԿԻ «Ակնարկ բան. շարժման պատմության» (մամուլի տակ ե)
16. Բժ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ «Մալարիա . . » 5 կ.
17. Բժ. ՄԵԼԻՔՅԱՆ «Սիֆիլիս» . . » 20 կ.
18. «ՅԵՐԵՔ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ» Ինսցենիրովկա . . . . . » 5 կ.
19. ԳԻՐԻՆԻՍ «Ինչ ե Արհեստակց. Արտադր. Միությունը» . . . » 40 կ.
20. ՎԻՆՆԵՎԵՑԿԻ «Աշխ-քի հաշմանդամների ապահովագրությունը . . . » 20 կ.
21. «Գործարանկոմներին կից կուլտ-հանձնաժողովների կանոնադրություն . » 5 կ.

## ՊԼԱԿԱՏՆԵՐ

22. «Բարձրացրու աշխատ. արտադրող. » 15 կ.
23. «Վերաշինենք մեր յերկիրը» (5 գույն) » 15 կ.
24. «Կարգա» միութ. վատ անդամի մասին » 15 կ.
25. «Սոցապահովագրության մասին» (4 գ) » 15 կ.
26. «Բատրակ, լսիր Լենինին» (4 գույն) » 15 կ.
27. «Կառուցող բանվոր հիշիր (կրկնակի) » 30 կ.
28. «Գնացեք հանգստյան տները» (4 գույն) » 15 կ.

Դիմել՝ Յերևան, Հ. Արհմիությունների խորհուրդ, № 14 սենյակ

ՀՀ Ազգային գրադարան
NL0863956

192 1/2387

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.